Պետրոս Դուրյան

Տրտունջք

Էհ, մնաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև . . .
Աստղ մ՚ալ ես կ՚երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որ թըռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծույն՝ շանթերո՛ւ արմատ՝
Հավելուն զենքերն ու զարդերն հըրատ...
Այլ, ո՛հ, ի՞նչ կ՚ըսեմ . . . շանթահարե զ՚իս,
Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե հյուլեիս,
Որ ժպըրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի . . .
Ողջո՛ւյն քեզ, Աստված դողդոջ Էակին,
Շողին, փըթիթին, ալվույն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց, թռիչն հոգվույս,
Ամպ տըվիր աչացս, հնք տըվիր սրտիս,
Ըսին մահվան դուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի,
Կյանք մ՚անհուն շողի, բույրի, աղոթքի.
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ,
Հոս մառախուղի մեջ համր անշըշունջ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ՚ըլլամ դալկահար,

Պլլրվիմ անվանդ մոնչեմ անդադար,
Թող անեծք մ՚ըլլամ քու կողրդ խրրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Ոհ, կը դողդոջեմ, դժգույն եմ, դժգո՛ւյն,
Փրրփրրի ներսրս դրժո՝խքի մ՚հանգոյն . . .
Հառաչ մ՚եմ հեծող նոճերու մեջ սև,
Թափելու մոտ չոր աշնան մեկ տերև . . .
Ոհ, կայծ տրվե՛ք ինձ, կայծ տրվե՛ք, ապրի՛մ.
Ի՞նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ . . .
Այս ճակատագիրն ի՞նչ սև է, Աստվա՛ծ,
Արդյոք դամբանի մրուրով է գծված . . .
Ոհ, տրվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրել կուզեմ դեռ ապրիլ ու ապրիլ .
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կայծ տրվեք, կյա՛նք՝ ձեր սիրահարին հեք:
Գարունն ոչ մեկ վարդ ճակտիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մինձ չեն տար:
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն հար կուլա, խուզարկե վրհեր:
Կրլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար նա դրրավ այդ լուսին .
Եվ մահամերձն ալ կուզե երկու բան,
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող միր վրրան:

Ի զո՛ւր գրրեցին աստղերն ինծի «սեր»,
Եվ ի զո՛ւր ուսուց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՛ւր սյուքեր «սե՛ր» ինձ ներշնչեցին,
Եվ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՛ւր թավուտքներ լրռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չառին երբե՛ք շունչ,
Որ չը խրռովին երազքրս վրսեմ,
Թույլ տրվին որ միշտ ըզնե երազեմ,

Եվ ի զո՛ւր ծաղկունք, փրթիթնե՛ր գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցրս խորան . . .
Ո՛հ, նոքա ամենքը զ՝իս ծաղրեր են . . .
-Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն . . .

1871